

Գ. Մ. Կալանդյան

ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ՄՅԱԳՆՎԱԾ ԵՎ ԿՈՐԱԾ ԲԱՌԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Համեմատական լեզվաբանությունը հրեան դալը մի գարազլուի կազմից իրանական լեզուների և հայերենի ուսումնասիրությունը գործում է ուսուցիչը գրադոկից թե պարսկերենով և թե հայերենով, այնուհետև հայերենով գրադոկիցին Վինդիզմանը, Պետրամանը, Գեղադարը և Ֆրիդրիխ Մյուլլերը: Այս գիտնականները ի նկատի ունենալով բառերի այն ստիպար թիվը, որ գոյություն ունի միաժամանակ հայերենում և պարսկերենում, եկան այն եզրակացություն, որ հայերենը իրանականի մի ճյուղն է ինչպես ավիստայի լեզուն, պահլավերենը և այլն: Եվ միայն Հյուրչմանն իր հոգակալոր աշխատություններում¹ մանրամասն քննելով հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների հնչյունական համապատասխանությունները և ստուգաբանելով հայերեն և իրանական նման բառերը, առաջին անգամ հարցնեց, որ այդ կարծիքը սխալ է, և որ հայերենը իրանական լեզվաճյուղի անդամ չէ, այլ նրանից անկախ ու նրան հավասար մի ճյուղ է հնդեվրոպական լեզվաընտանիքում:

Հնդեվրոպական հիմք լեզուն, որը վերականգնված է գիտնականների կողմից, բառ պրոֆ. Աճառյանի կատարած հաշվումների, պարունակում է 2223 արմատ բառ: Այս արմատ բառերից հայերենը պահել է 713 բառ, որից 432 բառ պահել է նաև իրանականը²: Իսկ հնդեվրոպական հիմք-լեզվի վերականգնված բառապաշարի բառերից 18-ը բոլոր լեզուներից պահել են միայն հայերենն ու արիականը (հնդիրանականը)³:

Այսպիսով պարզ է դառնում, որ բացի այն, որ հայ և պարսից լեզուները, որպես հնդեվրոպական լեզուներ, ունեն ցեղակցական մերձավոր կապեր, որակից և զալիս է բառային ընդհանրությունների մի մասը, միաժամանակ հայոց լեզուն իր գարազյաման ընթացքում քաղաքական ու կուլտուր-անտեսական տարրեր պայմանների հետևանքով տարրեր շրջաններում իր բառային կազմը որոշ չափով համարել է իրանական (պարսկական) փոխառությունների: Ինչպես հայանի է, հայոց լեզվի բառապաշարի մոտ 11 հազար արմատական բառերից ավելի քան 1400 արմատ ունի իրանական ծագում, կան նաև բազմաթիվ բառեր, որոնց պարսկական ծագումը ենթադրվում է, բայց պարսկերենի հնազույն բառապաշարի ոչ բավարար չափով պահպանված լինելը հնարավորություն չի տալիս այդ հիմնավորելը:

Պարսկերեն և հայերեն լեզուների ընդհանրությունների հարցը գիտես

¹ *St. u. H. u. b. s. c. h. m. a. n. n.*, Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, 1875 (KZ. 23, 195-198), Armenica 2աբբբ և Armenische Grammatik (1895), Armenische Studien (1863)

² *ՏՅ՝ Հ. ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, Կ. 1, 1940, էջ 33:*

³ *Նույն տեղում, էջ 85:*

լիակատար լուծված համարել չի կարելի, սակայն կարելի է նշել, որ հայոց լեզվի բառային կազմը նշանակալից չափով հարստացրել են պարսկական բառերը, որոնց մի զգալի մասը դեռ այսօր էլ պահպանված է հայոց լեզվի բառային կազմի, հաճախ նաև նրա բառային հիմնական ֆոնդի մեջ, հիմք տալով նրան նորանոր բառերի կազմության համար (ներքին բառակազմական միջոցներով):

Այդ բառերից են.

1. Մարդու մարմնի մասեր. Անդամ (հմմ. այլ. handaman, պհլ. andām, նպ. اندام), դիմակ (հմմ. պահլ. dēmak, նպ. ديمك) ճակատ (հմմ. սոգդ. cakat, պհլ. čakat), վարս (հմմ. այլ. varosa, պհլ. vars):

2. Ընտանեկան կապեր, ընկերություն, հարազատ (հմմ. այլ. haōōzata, պհլ. haōazāt), հարևան (հմմ. պհլ. *haōavan), ուսուցիչ (հմմ. պհլ. ramik), տոհմ (հմմ. հպ. tau(h)ma, նպ. تائما), օտար (հմմ. այլ. aiwā-tara, պհլ. *awtar):

Եւ վերջապես բազմաթիվ սովորական կյանքի բառեր — այն է՝ ազգ (հմմ. պհլ. azō), ազատ (հմմ. այլ. azāta, պհլ. azāt, նպ. اذات), ազգ (հմմ. հպ. azdā, պհլ. azd), հրեշտակ (հմմ. այլ. fraesta, պհլ. *freštak, նպ. فرشته), հանդես (հմմ. այլ. handaesa, պհլ. handēs), նպաստ (հմմ. հպ. *nū-upasta), պատգամ (հմմ. հպ. paiti-gama, պհլ. patgam, նպ. پاتگام), վստահ (հմմ. հպ. *vistāhuva, պհլ. vistaxv, նպ. وِستاخو), փառք (հմմ. այլ. xvarənah, պհլ. farr, նպ. فر):

Հայերենի և պարսկերենի բառային կապերը տարբեր են ըստ պարսից լեզվի տարբեր շրջանների (Երևք շրջան, հին, միջին և նոր), որոնք ինչպես հայտնի է, հանդիսանալով հին համաժողովրդական պարսկերենի շարունակությունը, տարբեր շրջաններում և հետևաբար զարգացման տարբեր վիճակներով գրական լեզվի աստիճանի են բարձրացել բարբառներից մեկի հիման վրա: Հայտնի է նաև այն, որ այդ փոխառությունները տեղի են ունեցել գլխավորապես պարթևական շրջանում և միայն նվազ չափով մյուս շրջաններում: Միակայն այդ փոփոխությունների մայր ձևերը հաճախ բացակայում են. հայտնի է, որ պարսկերենի տարբեր շրջաններից մեզ ավանդված գրականությունը շատ փոքր թիվ է կազմում և գրանով իսկ պարսից լեզվի պատմության մեջ գոյացել են բացեր. մեզ ավանդված չէ մսկեղոնական շրջանի (330—256 թթ.), ինչպես նաև արաբական շրջանի (643 թ.) պարսկերեն լեզուն, իսկ մյուս շրջաններից ավանդվածն էլ մեծ արժեք չի ներկայացնում:

Հին պարսկերենն ավանդված է մեզ Իսպիթունյան, Թախթե Ջամշիդի, Էքրաթանի, Սուեդի ջրանցքի, Սուգալի, Նախշի Թուստամի, Վանի և այլ մի քանի սևպագիր արձանագրություններով, որ թողել են Աքեմենյան թագավորները և զբաղված են մ. թ. ա. 522—338 թթ.: Այս արձանագրությունները տալիս են մեզ միայն մոտ 500 բառ: Ուստի բառերի այդ քանակությունը նույնիսկ դժվարությամբ կարող է ընդհանուր գծերով ներկայացնել հին պարսկերենի բառապաշարի պատկերը: Դրանք ըստ էության այն բառերն են, որոնք իբրև շարուն դործածվել են պետական, վարչական վավերագրերի, գլխավորապես արքայական, թագավորական հրովարտական մեջ: Հասկանալի է, որ դրանց մեջ չեն ներկայացված առօրյալում գործածվող, կենցաղի հետ կապված, բա-

նավոր խոսքի մեջ գործածական, սովորական կյանքին վերաբերող բազմաթիվ բառեր:

Պարթևական պահլավերենից (256—226 մ. թ. ա.) և շատ չնչին բան է մնում: Մեզ ավանդված է Ավրամանի մագաղաթները, մի քանի արձանագրություններ և մի քանի մանիքեական բնագրեր, որոնք գտնվեցին Խուրֆանում (Չինական Խուրքեստան):

Իսկ Սասանյան պահլավերենի շրջանից ավանդված գրականությունը ունի մասամբ կրոնական բովանդակություն, որը շատ միապաղաղ է, հետևապես այստեղ ևս բառապաշարը համակողմանի ներկայացված չէ: Ավելացնենք նաև այն, որ ավանդված գրականությունն էլ ներկայացված է պահլավական այնպիսի անկատար այբուբենով, որ հաճախ նրանց ճիշտ ընթերցումը մնում է անորոշ:

Պարսկերենի այդ բացերը լրացնելու, անցյալում գոյություն ունեցած որոշ բառերի գոյությունն ու ձևը գուշակելու համար օգնության են դալիս՝ սանսկրիտերենը, որը շատ նման է հին պարսկերենին և հնարավորություն է տալիս վերականգնել մեզ չավանդված որևէ բառի հին պարսկերեն ձևը, ինչպես նաև իրանական ճյուղին պատկանող տարրեր լեզուները և բազմաթիվ ժամանակակից պարսկական բարբառները, որոնք կարող են լայնորեն օգտագործվել ուսումնասիրողների կողմից:

Սակայն նշված բացերը լրացնելու համար մեծ սատար է հանդիսանում հայերենը, քանի որ հայերենում կան բազմաթիվ պարսկական փոխառություններ, որոնց հնագույն մայր ձևերը բացակայում են կամ չափազանց ձեւափոխված են և որոնց սկզբնական ձևերը չեն վերականգնվում պարսկերենի նախորդ փուլերի կամ էլ նրան մերձավոր ցեղակից լեզուների տվյալներով: Դրանց մի զգալի մասը վերականգնվում է հայերենի հենց այդ փոխառություններով:

Հիշենք դրանցից մի քանիսը, որոնք ցուցակադրվել են Հյուրշմանի հայտնի Armenische Grammatik գրքում՝ պարսկերենից փոխառած բառերի բաժնում, և որոնք ավելի մանրամասն ուսումնասիրված և սիստեմավորված են պրոֆ. Աճառյանի կողմից՝ գրի առնվելով «Արմատական բառարանում» և «Հայոց լեզվի պատմություն» 1-ին հատորում:

Հայերենի զինդակապետ «պարսկական զորապետական աստիճանը», Կապարհայիկ «պարսկական գնդի անուն», մատեան «պարսկական անմահների գուռը», պետմոգ «զրադաշտական ավանդ է» և այլ բառեր թեև պահպանված չեն որևէ իրանական լեզվում, բայց անշուշտ պարսկերեն են, քանի որ սրանք ներկայացնում են որևէ զուտ պարսկական պաշտոն, աստիճան և այլն⁴: Միաժամանակ պետք է նշել, որ նշված բառերը այժմ հայերենում գործածություն չունեն, այդ բառերը մեզ ավանդված են դասական գրականության միջոցով:

Հայերենում կան այնպիսի բաղադրյալ բառեր, որոնց կազմի մեջ մտնող բաղադրիչներից մեկը իրանական է, ուստի և այդ բառերը ամբողջությամբ պետք է որ լինեն պարսկական, սակայն դրանք ոչ մի իրանական լեզվի մեջ գոյություն չունեն: Այդ բառերից են. նավակատիկ (իրանակ. nava — «նոր»),

⁴ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1940, հ. 1, էջ 316:

Ասորուշահ (պարսկ. ašar Եկրակ), Արուսյակ (պհլ. arus — սպիտակ, ավ. aurušā):

Ինչպես ցույց է տալիս պրոֆ. Աճառյանը (Հ. լ. պատմ. հ. 1, էջ 316), կան մի խումբ բառեր, որոնք գտնվում են միայն հայերենի և ավեստայի լեզվի մեջ, ինչպես կախարդ — ավ. kaxvarəda, հարազատ — ավ. haʔozāta և այլն:

Այս բառերը ավանդված չեն ոչ հին պարսկերենում, ոչ պահլավերենում և ոչ էլ նոր պարսկերենում, բայց որովհետև ավեստայի լեզվում կան, ուստի իրանական են և որովհետև հայերենում էլ կան, ուստի անշուշտ պարսկերենում էլ պետք է եղած լինեն⁵:

Համեմատական լեզվաբանություն տվյալները ենթադրել են տալիս, որ հայերենի պարմայիլ «պատմեւ» բառը իրանական փոխառություն է և, որ պհլ. այն պետք է ունենար *parimayam ձևը, որն իր հերթին պետք է հին պարսկերենում ունենար *parima ձևը:

Հայերենի «պատրաստ», նպ. پراستان, պհլ. patrastan բառերը ենթադրել են տալիս, որ այդ բառի հպ. ձևը պետք է լիներ *patirasta:

Հայերենի ՊԱՏՎԱՍՏ, նպ. پاتواست, պհլ. patvasthan բառերը ենթադրել են տալիս հին պարսկերենում *patiwasti, կամ *patiβasti ձևը:

Հայերեն վստահ, նպ. وستاخ, պհլ. vistaxv բառերը ենթադրել են տալիս հին պարսկերենում *vista ruva բառը:

Հայերենի «վնաս», նպ. ونگ, պհլ. vinas, տանակ. vnaça բառերը ենթադրել են տալիս, որ հպ.ում և անպարման պետք է, որ այդ բառը քիչ փոփոխված ձևով գոյություն ունենար: Այսպիսով հայերենում պահպանված փոխառված բառերի օգնությամբ ու համեմատական լեզվաբանության շնորհիվ հնարավոր է դառնում վերականգնել մեզ չավանդված հին պարսկերենի որոշ ձևեր:

Ինչպես արդեն նշեցինք, հայկական փոխառությունները տեղի են ունեցել գերազանցապես պարթևական շրջանում: Հայերենի պարթևական փոխառությունները վերաբերում են կուլտուրայի բոլոր կողմերին. ինչպես՝ բնություն և նրա ուժերի, կրոնի, մարդու և կենդանու մարմնի մասերի, հիվանդություն և նրա բուժման, կենդանիների, բնտանիքի և հասարակություն, երկրագործության, խաշնարածության, առևարի, գիտության և արվեստի, դուխների, ուտելիքի և բմպելիքի, անալին անտեսություն, կշռի և չափի, մետաղների, ժամանակի և տարածության (տեղ), պետության և պետական կազմին:

Այստեղ մենք հանդիպում ենք այնպիսի բառերի, ինչպիսիք են բրինձ (հմմ. նպ. چاود, սոխ (պհլ. *sōx), ճախարակ (պհլ. *čaxak), համար (պհլ. amar), վաճառել (պհլ. vacar), կարմիր (պհլ. *karmir, սոգդ. karmir), կապույտ (պհլ. kapōt, նպ. كجود), սև (պհլ. *siyav, ավ. svava), սպիտակ (պհլ. spētak, նպ. سفيد), կոշիկ (պհլ. *kavšik), շապիկ (պհլ. šupik), ճաշ (պհլ. *čāš), կարագ (պհլ. *karak, նպ. كرك), դրոշ (պհլ. draš, ավ. drašā), զինվոր (պհլ. zēn, ավ. zaēna), զորք (պհլ. zōr, ավ. zavarə, նպ. زور) և

⁵ Տե՛ս Հ. ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, հ. 1, 1940, էջ 316:

ալլն, և ալլն, բառեր, որոնք հայոց լեզվի համար միս ու արլուն են դարձել։
 Հայերենը պահպանել է պարսկերենի ամենաընտիր մոտ 200 բառ, որոնք նոր պարսկերենում կորած են։ Հայերեն այդ բառերի մի մասը մինչև այսօր էլ դործածություն մեջ է հնչյունափոխված կամ առանց հնչյունափոխության։ Այստեղ մենք հանդիպում ենք ախպիսի բառեր, ինչպիսիք են՝ ազգ (պհլ. azg), աշխատել (պհլ. axšāi), ապստամբ (պհլ. apastamb), ասպանդակ (asp+?), ասպատակ (պհլ. aspatak), բաձակ (պհլ. bāžak), դաշն (պհլ. dašn), դեսպան (պհլ. despan), զեն (պհլ. zēn), կարմիր (սոգդ. karmir, պհլ. *karmir), համհարզ (պհլ. hamharz), հանդես (պհլ. handes), հավասար (պհլ. iāvasar), ուժ (պհլ. ož), պաշար (սոգդ. pšawr, պհլ. pəšar), պարիսպ (պհլ. parisp), վանդակ, վաշտ, վերմակ (պհլ. vermak), վիշտ (հմմ. պհլ. biš, հպ. *višti, սանսկ. viṣṭi և ալլն), սահման (պհլ. saḥman), պատճեն (պհլ. pačēn), արմավ (պհլ. armav)։

Նշված փոխառված բառերը ոչ միայն կորած են նոր պարսկերենում, այլև նրանց սկզբնական ձևերը պահպանվել են մեծ մասամբ անհայտ են, որովհետև բուն ձևերը պահպանված ընդհանրապես հայտնաբերված չեն եղել։ Այդպիսի բառերի դիմաց «Արմատական բառարանում» մի աստղ է դրված կամ հարցական նշան։ Նշանավոր իրանագետ հանգուցյալ պրոֆ. Ռ. Ֆ. Աբրահամյանը օգտվելով իր տրամադրություն տակ եզած նյութերից, վերականգնել է հիշյալ անհայտ բառերի մի մասի նախնական ձևերը։

Եվ հատկանշականն այն է, որ այդ բառերը մեծ մասամբ զուգահեռաբանված են ենթադրված (աստղանիշ) տառադարձություն, որ մեջ է բերված պրոֆ. Աճառյանի գործերում։ Այսպիսով, ճշտվում և լրացվում է փոխառնված անհայտ բառերի մի մասի ավելությունը պահպանվել են և նրանց ուղիղ ընթերցումը։

Պարսկերենի մթաղնված բառերի վերականգնման համար ոչ պակաս կարևորություն ունի հայերենի օգնությունը կատարված հնչյունաբանական ուսումնասիրությունը։ Քանի որ հայերենը մաքուր ու անաղարտ է պահպանել պահպանված փոխառնված բառերի արտասանությունը։ Նկատի ունենալով նաև այն, որ արամեական ծագում ունեցող հին և նոր պահպանված գրությունները լրիվ չեն արտացոլում ձայնավոր հնչյունները, հայերենի հնչյունաբանությունն առավելությունը իրանական մթաղնված բառերի վերականգնման գործում դառնում է ակնհայտ։

Ինչպես արդեն նշվեց, հայերենի պահպանված փոխառությունները տեղի են ունեցել երկու շրջանում. արշակունիների կամ պարթևական շրջանում և Սասանյան շրջանում։ Հաճախ նույն բառը փոխ է առնվել երկու շրջանում էլ, երկու անգամ։ Իհարկե, այդ փոխառությունները իրենց ձևով տարբերվում են իրարից, սակայն իրապես նույնն են և ներկայացնում են նույն բառի զանազան շրջանների արտասանությունը. օրինակ՝ աշխարհ բառը փոխ է առնված առաջին շրջանում, երբ այդ բառը պահպանվել է արտասանվում էր xšaθr և xšahr (հպ. xšaθra ձևից), որտեղ հայերենում բառակազմում ավելացել է կփոփոխի a և hr-rh-ի գրափոխություն է կատարվել։

Երկրորդ անգամ այդ բառը հայերենին է անցել Սասանյանների ժամանակ։

՝ Տե՛ս Պրոֆ. Ռ. Աբրահամյան, Պահպանված փոխառնված անհայտ բառերի ընթերցումը, Հայկ. ՍՍՏ ԳԱ աշխատությունների ժողովածու, 3-րդ հատոր, 1948։

նակ satr և šahr ձևից, որտեղից և հայերենում կազմվել է շահապ և շահաստան բառերը և այլն:

Ավելի կարևոր են, իհարկե, առաջին շրջանի փոխառությունները և հայերենի փոխառություններն էլ հենց այդ շրջանից են:

Այդ երևում է պահլավերենի և հայերենի շ-երի համապատասխանությունից, հակառակ նոր պարսկերենի շ-ի: Օր.[՝] պհլ. aržan, հայ. արժան, իսկ նպ-ում arzan, ինչպես նաև պհլ. և հայերենի v-երի համապատասխանությունից. օր.[՝] պհլ. varaz բառը, որը պարթևական շրջանի փոխառություն է, երբ դեռ v-ն չէր փոխվել ց-ի (պհլ. varaz < նպ-ում goraz), մինչդեռ հայերենում պահպանված է վարազ ձևով:

Մի խոսքով հայերենը պահլավական արտասանությունը պահել է անփոփոխ ձևով, մինչդեռ նոր պարսկերենը հաճախ նահանջում է: Պատճառն այն է, որ պարսկերեն լեզվի անցումները կատարվել են Սասանյան և ավելի ուշ շրջանում:

Պահլավերենի a, ā (կարճ և երկար) հայերենում հավասարապես տալիս են a, ինչպես օր.[՝] ազգ, ազդ, անազարմ, անապատ, անդամ, դրամ (այս բոլորը պահլավերենում ունեն նախատառ կարճ a), ազատ, ախոռ, աշկարա, զնդան (որոնք պահլավերենում ունեն երկար a): Մինչդեռ գիտենք, որ նոր պարսկերենում պահլավերենի կարճ a-երը տվել են a, ինչպես՝ اِنْدَام, دَرَام և այլն:

Պհլ. o-ն բոլոր դեպքերում նպ-ում տալիս է ō, այնինչ հայերենում այդ բացատրվում է հայոց լեզվին հատուկ հնչյունական օրենքներով. այսպես՝ պհլ. patmacan > նախ պատմոյճան, ապա > պատմուճան: Այդ տեսակ են նաև hamgōnak — համգունակ, պհլ. gōnak > նախ գոյնակ, ապա > գունակ, gōšak — գուշակ բառերը:

Պհլ. ū-ն նոր պարսկերենում փոխվում է o-ի, մինչդեռ հայերենում այն մնում է անփոփոխ և ենթարկվելով հայերենի հնչյունափոխության օրենքին, բառամիջում սզվում է. օր.[՝] պհլ. dūrust, հայ. դրուստ, նպ. dorost, պհլ. kūn-šit, հայ. կնճուտ, նպ. konjed, konjet, պհլ. hūnar, հայ. հնար, նպ. honār և այլն:

Պահլավերենի շրթնային պայթական p-ն նոր պարսկերենում շնչեղանում է (p'), մինչդեռ հայերենը պահում է նախասկզբնական ձևը. օր.[՝] պհլ. patkar, հայ. պայքար, նպ. p'eikar, պհլ. patkar, հայ. պատկեր, նպ. p'eikar: Միայն որոշ դեպքերում է, այն էլ միայն բառասկզբում, որ հայերենում ևս շնչեղացված է. օր.[՝] պհլ. patyarak, հայ. փաթերակ, պհլ. pašaman, հայ. փոշման, պհլ. parr, հայ. փառ, պհլ. pil, հայ. փիղ և այլն:

Մյուս կողմից՝ պհլ. p-ն նոր պարսկերենում հաճախ տալիս է b(p > b), ինչպես օր.[՝] պհլ. apat, նպ. آباد (abad), պհլ. apēkam, նպ. اَبْكَام (hikam), պհլ. apēdat, նպ. اَبْدَاد (bidad), պհլ. asp, նպ. اَسْب (asb), պհլ. spahpat, նպ. سَبْطَبَد (sepahbod), պհլ. darpan, նպ. دَرْبَان (därban), պհլ. depak, նպ. دَبَا (diba) և այլն, և այլն: Մինչդեռ հայերենը այն պահպանում է անփոփոխ ձևով: Հայերենում բացառություն է կազմում «բամբակ» բառը (հմմ. պահլ. pambak), այն էլ անկասկած ասիմիլացիայի հետևանքով է:

Պահլավերենի շրթնային v-ն նոր պարսկերենում տալիս է b(v > b).

մինչդեռ հայերենում այն մնում է անփոփոխ: Դրանով խակ ցույց է տալիս, որ v-ն կարող էր փոխվել b-ի 5-րդ դարից հետո:

Պահլավերենի „fr“ - կապակցությունը համապատասխանում է հայերենի «հր»-ն: Օր.՝ պհլ. framan, հայ. հրաման, պհլ. freštak, հայ. հրեշտակ և այլն:

Այս երևույթը հատուկ էր պարթևական (հյուսիսային) պահլավերենին, որը նոր պարսկերենում բացակայում է:

Պահլավերենի լեզվատամնային խուլ պայթական t-ն նոր պարսկերենում շնչեղանում է (t'): Այդ երևույթը հայերենում շատ սահմանափակ դեպքերում է. և այն երբեմն տեղի է ունենում բառակազմում. օր.՝ պհլ. tu, հայ. թրախ, պհլ. tōšak, հայ. թոշակ, պհլ. takok, հայ. թակուկ, պհլ. tang, հայ. թանգ, պհլ. tasuk, հայ. թասու: Մյուս բոլոր դեպքերում հայերենում պհլ. t-ն պահպանվում է անփոփոխ:

Երկու բառի մեջ, նոր պարսկերենի համապատասխան բառերի օրինակով, պահլավերենի t-ն հայերենում փոխվում է j-ի. այն է՝ պհլ. patman, հայ. պալման. پاتمان, պհլ. patkar, հայ. պալքար, նպ. پاتکار: Այս երևույթը ցույց է տալիս, որ վերջիններս ավելի ուշ շրջանի ձևեր են:

Մինչդեռ «պատգամ» (հմմ. պհլ. patgam) և «պատկեր» (հմմ. պհլ. patkar) բառերը լինելով ավելի վաղ շրջանի փոխառություններ, այդ օրենքին չեն ենթարկվել, այնինչ նոր պարսկերենի համապատասխան բառերը ենթարկվելով այդ օրենքին, տվել են پاتگار և پاتکار ձևերը:

Եվ վերջապես պահլավերենի -ak վերջավորությունը նույնությամբ պահպանվել է հայերենում, այնինչ նոր պարսկերենում այն փոխվել է a-ի և e-ի: Օր.՝ պհլ. dēpak «դիպակ», նպ. diba, պհլ. nēzak «նիզակ», նպ. neize, պհլ. dastak «դաստակ», նպ. daste, պհլ. dēmak «դիմակ», նպ. dima, պհլ. zartak «զարտակ», նպ. zarde, պհլ. xarbusak «խարպիզակ», նպ. xārboze և այլն:

Այսպիսով, հայերենի հնչյունաբանությունը օգտակարությունը պարսկական մթաղնված բառերի վերականգնման գործում դառնում է ակնհայտ:

Նշված բառերը կամ առհասարակ չեն պահպանվել պարսկերենում, կամ էլ ենթարկված են զգալի հնչյունափոխություն, մինչդեռ հայերենը այն պահպանել է անաղարտ ձևով և հայկական համապատասխան ձևերը տալիս են նրանց հին պատկերը վերականգնելու հնարավորությունը, որը և մեծ արժեք է ներկայացնում ինչպես պարսից լեզվի հնչյունաբանությունը պատմության, այնպես էլ պարսկերեն լեզվի բառապաշարի պատմական պատկերը լրացնելու ինչպես և ժամանակակից պարսկերենի օգտագործելի բառային կազմը համարելու համար:

Ինչպես հայտնի է, ներկայումս պարսկերեն լեզվի շինարարության մեջ նկատվում է փոխառյալ (գլխավորաբար արաբական) բառերը հնարավոր պարսկերեն բառերով փոխարինելու տենդենց: Բնական է, որ հայերենի օգնությամբ վերականգնվող այս պարսկերեն բառերի մի զգալի մասը այդ ձևով կարող է մտնել նոր պարսկերենի բառապաշարի մեջ: Մենք կարծում ենք, որ մոտիկ ապագայում, երբ պարսիկները կազատագրվեն Ղուրանի դոգմաներից և դրա հետ արաբական անուններ կրելու տրադիցիայից, նրանք կկարողանան նաև վերականգնել իրենց վաղեմի անձնանունները և փոխանակ կոչվելու շասան, Նուսեյն, Ալի, Նադի, Թադի իրենց զավակներին կանվանեն իրենց նախահայրերի անուններով՝ Երվանդ, Արշակ, Դուրգեն և այլն:

Հայտնի է, որ հայերենի մեջ գործածվող շատ անձնանուններ, որոնք

թվում է, թե ընդի ու հարազատ ազգային հայկական անուններ են, մեծ մասամբ պարսկական (պահլավական) փոխառություններ են:

Այստեղ ևս փոխառու լեզուն՝ հայերենը կարող է մեծ չափերով նպաստել թե՛ իրանական ոչ մի լեզվով չավանդված պարսկական անձնանունների վերականգնմանը, թե՛ պարսից լեզվի հին օրինաչափությունների բացահայտման գործին՝ հատկապես հայերենում պահպանված բարդ բառերի շնորհիվ: Իսկ բարդ ու ածանցավոր բառերի տևականներն ու կազմության ձևերը ուսումնասիրելը իրենից ներկայացնում է խոշոր գիտական արժեք այն առումով, որ բացահայտում է լեզվի հարստությունն ու ճկունությունը, իսկ ինչպես հայտնի է, իրանական անձնանունները մեծ մասամբ կազմված են լեզվին արդեն ծանոթ երկու բառերի բաղադրությունից, այսինքն կազմվածքով բարդ բառեր են. այսպես՝ Արշամ < հին պարսկ. Arsama, որը կազմված է arša «արջ» և ama «ուժ» բառերից և նշանակում է «արջի ուժ ունեցող», Բագրատ < հին պարսկ. Bagadata, որը նշանակում է հին պարսկ. Baga «աստված» և dāta «տված»՝ Աստվածատուր:

Ինչ չեն նաև կազմվածքով ածանցավոր անձնանունները. այսպես՝ Գուրգեն < պհլ. *Gurgēn կամ *Vrkēn փաղաքշահան ցն մասնիկով՝ «զալուկ», Արշակ < հին պարսկ. Arsaka, որը կազմվում է հին պարսկ. arša «արջ» բառից և -akā նվազական մասնիկից¹:

Ժամանակակից պարսիկները զգալիորեն լքում են արտասանում Հմայակ, Մանեհ, Բադրատ, Մերուժան, Վահրեհ, Վարդան և շատ ուրիշ հայկական դարձած անունները, երբևէ չկասկածելով, թե դրանք երբևիցե իրենց սեփական զուտ պարսկական անձնանուններն են և չեն:

Այստեղ ևս հայերենի փոխառությունների հնչյունական օրենքների հիման վրա կարելի է վերականգնել դրանց երբևիցե բուն պարսկական ձևերը և այսպիսով այդ անունները ևս զործածության մեջ մտցնել պարսկերենի արտասանական բաղալին հարազատ ձևերով:

Հայերենում կան բազմաթիվ անձնանուններ, որոնց ատաղձը պարսկական է, իսկ կազմության օրինաչափությունները՝ հայկական, որոնք սակայն բացահայտվում են միայն ձևաբանական և հնչյունաբանական վերլուծության շնորհիվ: Օրինակ. Արուսյակ < պհլ. arūs «սպիտակ», կամ Անուշ < պհլ. auōšah, կազմված a «խտական նախամասնիկից + nōšah = «սանձ», նույն ձևից է Անուշավան < պհլ. Anōšahrubana «սանձ հողի», որը նոր պարսկերենում

դարձել է انوشيروان (Anuširvan):

Մեր հոգվածի նպատակներից զուրս է մանրամասնությունների մեջ մտնել անձնանունների հարցում. միայն նշենք, որ հայերենում պահպանված իրանական անձնանունների հնչյունաբանական և ձևաբանական ուսումնասիրությունը մեծ ստատար կհանդիսանա պարսկական պատմական բառագիտության բացերը լրացնելու, ինչպես նաև հնչյունական օրենքների հաշվառմամբ հնարավոր չափով վերականգնելու կամ ճշտելու նշված փոխառությունների մայր ձևերը:

¹ Հմմ. Հ. ր. Անանյան, Հայոց անձնանունների բառարան: